ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 27Ա

Ավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման

ք. Երևան «03» դեկտեմբերի 2012թ.

Երևան համայնքը, ի դեմս քաղաքապետ Տ.Մարգարյանի, որի անունից 2012 թվականի նոյեմբերի 27-ի հ.7555-Ա որոշման հիման վրա հանդես է գալիս աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Հ.Նավասարդյանը (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Է.Թարփոշյանի, որը գործում է համաձայն կանոնադրության, (այսուհետ՝ Փոխադրող), մյուս կողմից, հիմք ընդունելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի, ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի հ.762 և 16.10.2008թ. հ.1167-Ն որոշումների և Երևանի քաղաքապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի հ.7555-Ա որոշման դրույթները, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրով Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Փոխադրողը պարտավորվում է Երևանի քաղաքապետի 2012 թվականի նոյեմբերի 27-ի հ.7555-Ա որոշման համաձայն ավտոբուսային հ.38 երթուղում իրականացնել կանոնավոր փոխադրումներ;

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Փոխադրողը պարտավոր է.

2.1.1. ապահովել ավտոբուսների (միկրոավտոբուսների) տեխնիկական սպասարկումը, ընթացիկ նորոգումը և դրանց հաշվառումը,

2.1.2. երթուղու որևէ հատվածում երթևեկության հարկադրված դադարեցման կամ սահմանափակման դեպքում /շինարարական աշխատանքներ և այլն/ դրա մասին անհապաղ տեղեկացնել հերթապահ երթակարգավարին և նրա հրահանգավորումից հետո միայն երթուղին ժամանակավորապես շահագործել այլ ուղեգծով և չվացուցակով,

2.1.3. ապահովագրել երրորդ անձանց կյանքին, առողջությանը կամ գույքին պատճառված վնասի հատուցման իրենց քաղաքացիական պատասխանատվության ռիսկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան,

2.1.4. արտակարգ իրավիճակների ժամանակ լիազոր մարմնի պահանջով, համարժեք փոխհատուցման պայմանով, տրամադրել անհրաժեշտ քանակությամբ տրանսպորտային միջոցներ՝ բնակչության տարհանման աշխատանքներում ներգրավելու համար,

2.1.5. ՀՀ կառավարության 2001թ. օգոստոսի 16-ի հ.762 որոշմամբ հաստատված կարգով նախատեսված ժամկետներում «Երևանտրանս» ՓԲ ընկերության հետ կնքել երթուղու սպասարկման ծառայությունների մատուցման պայմանագիր,

2.1.6. Ապահովել երթուղու անխափան սպասարկումը,

2.1.7. Երթուղու սպասարկումն իրականացնել բացառապես Երևանի քաղաքապետի 2012թ. մարտի 30-ի թիվ 2911-Ա որոշմամբ սահմանված ուղեգծով՝ սույն պայմանագրին կից հավելվածում (այն հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը) նշված, դեղին հիմնագույնի համարանիշերով կահավորված միկրոավտոբուսներով (ավտոբուսներով) և սահմանված նմուշի երթուղային ցուցահարթակներով;

2.1.8. Երթուղին սպասարկել հաստատված չվացուցակին համապատասխան (միկրոավտոբուսային երթուղիները սպասարկել երթուղային տաքսու ռեժիմով);

2.1.9. Անվճար տեղափոխել (բացառությամբ միկրոավտոբուսներով իրականացվող փոխադրումների) ՀՀ կառավարության 1997թ. հուլիսի 8-ի հ.251 և 2010թ. ապրիլի 22-ի հ.481-Ն որոշումներով սահմանված արտոնություններից օգտվող քաղաքացիներին;

2.1.10. Երթուղին սպասարկել 100 (հարյուր) դրամ փոխադրավարձով;

2.1.11. Երթուղու սպասարկման ընթացքում որևէ միկրոավտոբուսի (ավտոբուսի) անսարքության դեպքում այն փոխարինել պայմանագրին կից ցուցակում ընդգրկված այլ միկրոավտոբուսով (ավտոբուսով);

2.1.12. Միջոցներ ձեռնարկել երթուղին սպասարկող միկրոավտոբուսները սահմանված նստատեղերի քանակից ավելի ուղևորներով չշահագործելու համար;

2.1.13. Երթուղու սպասարկումից հրաժարվելու մտադրության դեպքում, սպասարկման դադարեցման օրվանից առնվազն 50 օր առաջ, այդ մասին գրավոր տեղեկացնել Պատվիրատուին;

2.1.14. Երթուղու սպասարկման ընթացքում ապահովել մրցույթի ներկայացված և սույն պայմանագրին կից ցուցակում ընդգրկված միկրոավտոբուսների (ավտոբուսների) համապատասխանությունը մրցութային պայմաններին;

2.1.15. Երթուղին սպասարկել միկրոավտոբուս (ավտոբուս) վարելու անհրաժեշտ որակավորում ունեցող վարորդների միջոցով;

2.1.16. Պատվիրատուի պահանջով անհապաղ տրամադրել պայմանագրային պարտավորությունների կատարման հետ առնչվող համապատասխան փաստաթղթեր;

2.1.17. Ղեկավարվել տրանսպորտի ոլորտում գործող օրենսդրական և գերատեսչական նորմատիվ ակտերով:

2.2 Պատվիրատուն պարտավորվում է.

2.2.1. երթուղային ցանցին համապատասխան ապահովել երթուղու կանոնավոր սպասարկման համար անհրաժեշտ պայմաններ;

2.2.2. երթուղու ուղեգծի և շարժման չվացուցակի փոփոխման անհրաժեշտության դեպքում նախապես տեղեկացնել Փոխադրողին;

2.2.3. Փոխադրողի առաջարկությամբ երթուղու ուղեգծի կամ շարժման չվացուցակի փոփոխության անհրաժեշտության դեպքում քննարկել առաջարկությունը և արդյունքների մասին ողջամիտ ժամկետում տեղեկացնել Փոխադրողին;

2.2.4. միկրոավտոբուսների (ավտոբուսների) երթևեկության անվտանգությանն սպառնացող գործոնների կամ երթուղում շարժման սահմանափակման /դադարեցման/ հետևանքով միկրոավտոբուսների (ավտոբուսների) շահագործման անհնարինության կամ սահմանափակման մասին անհապաղ տեղեկացնել Փոխադրողին;

2.2.5.Երթուղու ուղեգծում ապահովել անհրաժեշտ թվով կահավորված կանգառներ;

2.2.6. Փոխադրողին անհապաղ տեղեկացնել երթուղու սպասարկման ընթացքում հայտնաբերված թերությունների մասին:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

3.1.Փոխադրողն իրավունք ունի.

3.1.1.Երթուղում խափանված միկրոավտոբուսը (ավտոբուսը) փոխարինել պայմանագրին կից ցուցակում ընդգրկված այլ միկրոավտոբուսով (ավտոբուսով);

3.1.2. Մեկից ավելի ներքաղաքային միանման երթուղիներ սպասարկելիս, անհրաժեշտության դեպքում, երթուղում շահագործել իր կողմից սպասարկվող երթուղիներում ընդգրկված այլ միկրոավտոբուս (ավտոբուս);

3.1.3. Ներկայացնել գրավոր առաջարկություններ երթուղու սպասարկումը բարելավելու վերաբերյալ;

3.1.4. երթևեկության անվտանգությանը սպառնացող կամ երթևեկությանը խոչընդոտող արգելքների մասին, որոնք վերաբերում են Պատվիրատուի գործառույթներին, անհապաղ տեղյակ պահել Պատվիրատուին և պահանջել դրանց ժամանակին վերացումը;

3.1.5. Սահմանված կարգով հարց բարձրացնել՝ ուղեվարձի վերանայման համար;

3.1.6. Բողոքարկել առանց իր հետ համաձայնեցման այլ երթուղիների ուղեգծերի փոփոխման վերաբերյալ որոշումը, որի արդյունքում փոփոխված ուղեգծերը առավելապես կրկնում են իր կողմից սպասարկվող երթուղու ուղեգծին;

3.1.7. հրաժարվել երթուղու սպասարկման իրավունքից, այդ մասին առնվազն 50 օր առաջ գրավոր տեղյակ պահելով Պատվիրատուին, որի հետևանքով սույն պայմանագիրը համարվում է լուծված (միակողմանի հրաժարում):

3.2. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.2.1. Ցանկացած ժամանակ ստուգել Փոխադրողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքը՝ զննելով միկրոավտոբուսները (ավտոբուսները), ուսումնասիրելով փաստաթղթերը, խախտում հայտնաբերելու դեպքում կազմել արձանագրություն և կիրառել պատասխանատվության միջոցներ:

3.2.2. «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ Փոխադրողին զրկել երթուղու սպասարկման իրավունքից, որի հետևանքով սույն պայմանագիրը համարվում է լուծված (միակողմանի հրաժարում):

3.2.3. Փոխադրողի կողմից սույն պայմանագրի 2.1 կետի 2.1.7 և 2.1.10 ենթակետերով սահմանված պարտավորությունների խախտման արձանագրման դեպքում կիրառել պատասխանատվության միջոցներ:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Փոխադրողը սույն պայմանագրի 2.1.7 ենթակետով սահմանված պարտավության խախտման դեպքում.

ա) առաջին անգամ՝ գրավոր զգուշացվում է.

բ) երկրորդ անգամ և հետագայում յուրաքանչյուր խախտման դեպքի համար Երևան համայնքի բյուջե է վճարում տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

4.2. Փոխադրողի կողմից սույն պայմանագրի 2.1.10 ենթակետով սահմանված պարտավորության խախտման դեպքում.

ա) առաջին անգամ՝ Երևան համայնքի բյուջե է վճարում տուգանք 50.000 ՀՀ դրամի չափով.

բ) երկրորդ անգամ և հետագայում յուրաքանչյուր խախտման դեպքի համար Երևան համայնքի բյուջե է վճարում տուգանք 100.000 ՀՀ դրամի չափով:

4.3. Սույն պայմանագրի 2.1.7 և 2.1.10 ենթակետերով սահմանված պարտավորությունների խախտման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որտեղ ամրագրվում են խախտման վերաբերյալ անհրաժեշտ տվյալները;

4.4. Սույն պայմանագրով չկարգավորվող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ

Անհաղթահարելի ուժի առկայությունը կողմերին ազատում է սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար սահմանված պատասխանատվությունից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ , ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է 03.12.2012թ-ից մինչև 02.12.2022թ.:

6.2. Սույն պայմանագիրը համարվում է լուծված.

6.2.1. սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտմամբ,

6.2.2. սույն պայմանագրի 3.1. կետի 3.1.7. ենթակետով ու 3.2. կետի 3.2.2., ենթակետով նախատեսված դեպքերում:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրը կարող է փոփոխվել և լրացվել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ գրավոր փաստաթուղթ կազմելու միջոցով:

7.2. Պայմանագրի փոփոխությունները և լրացումները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3. Կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ եթե համաձայնություն ձեռք չի բերվում, ապա դատական կարգով:

7.4.Սույն պայմանագիրը կնքված է երկու հավասարազոր օրինակից, որոնցից մեկական օրինակը պահվում է կողմերի մոտ:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ՓՈԽԱԴՐՈՂ
Երևանի քաղաքապետ՝ Տ. Մարգարյան	«Երևանի ավտոբուս» ՓԲԸ
Լիազորված անձ՝ Հ. Նավասարդյան	Տնօրեն՝ Է.Թարփոշյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի 1	հասցեն՝ ք.Երևան, Թևոսյան 5
Կ.Տ.	Կ.Տ.

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Երևանի քաղաքապետարանի և «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի միջև 03.12.2012թ. կնքված՝ ավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման պայմանագրի

Երևանի ներքաղաքային ավտոբուսային հ.38 երթուղու շարժակազմը

Հ/Հ	Ավտոմեքենայի				Երթուղում աշխատելու համար սահմանված ժամկետը
	մակնիշը	հաշվառման համարանիշը	դեղին հիմնագույնի համարանիշը	թողարկման տարեթիվը	
1.	HIGER KLQ6770G	771 UL 64	4554S	2011	02.12.2022թ.
2.	HIGER KLQ6770G	680 UL 64	4588S	2011	
3.	HIGER KLQ6770G	576 UL 64	4511S	2011	
4.	HIGER KLQ6770G	655 UL 64	4429S	2011	
5.	HIGER KLQ6770G	639 UL 64	4434S	2011	
6.	HIGER KLQ6770G	703 UL 64	4422S	2011	
7.	HIGER KLQ6770G	634 UL 64	4437S	2011	
8.	HIGER KLQ6770G	759 UL 64	4425S	2011	
9.	HIGER KLQ6770G	693 UL 64	4436S	2011	
10.	HIGER KLQ6770G	620 UL 64	4438S	2011	
11.	HIGER KLQ6770G	695 UL 64	4443S	2011	
12.	HIGER KLQ6770G	776 UL 64	4454S	2011	
13.	HIGER KLQ6770G	631 UL 64	4463S	2011	
14.	HIGER KLQ6770G	606 UL 64	4500S	2011	
15.	HIGER KLQ6770G	792 UL 64	4575S	2011	
16.	HIGER KLQ6770G	614 UL 64	4471S	2011	
17.	HIGER KLQ6770G	755 UL 64	4481S	2011	
18.	HIGER KLQ6770G	758 UL 64	4407S	2011	

Պատվիրատու

Լիազորված անձ՝ Հ.Նավասարդյան

(ստորագրություն)

03.12.2012թ.

Կ.Տ.

Փոխադրող

«Երևանի ավտոբուս» ՓԲԸ

Տնօրեն՝ Է.Թարփոշյան

(ստորագրություն)

03.12.2012թ.

Կ.Տ.